

Հետաքրքրության հայտեր ներկայացնելու հրավեր

Վեոլիա Ջուր ՓԲԸ-ն հրավիրվում է համապատասխան փորձառություն ունեցող ընկերությունների ներկայացնել հետաքրքրության հայտեր ներքոհիշյալ ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրված մրցույթին մասնակցելու համար՝

Վեոլիա Ջուր ՓԲԸ «Հաղորդակցության ծրագիր-2018» - ով նախատեսված հեռուստառեպորտաժների, տեսահոլովակների, տեսաֆիլմերի պատրաստում և ցուցադրություն հանրապետական, մայրաքաղաքային եւ մարզային սփռման հեռուստաալիքներով, տեսալուսանկարահանման իրականացում, տեսանյութերի թարգմանություն:

Շահագրգիռ ընկերությունները պետք է բավարարեն ներքոնշյալ պայմանները

Առնվազն մեկ նմանատիպ պայմանագրի իրականացման փորձառություն ողջ Հայաստանի տարածքով՝ վերջին 5 տարիների ընթացքում: Հայտատուն պետք է ներկայացնի համապատասխան պայմանագրերը, մատուցված ծառայությունների բնութագրերը և ավարտական ակտերը, ինչպես նաև պատվիրատուների կոնտակտային տվյալները:

Նշված ծառայությունների իրականացման համար որակավորված անձնակազմ, բաղկացած նվազագույնը հինգ անձից՝

1. Ծրագրի ղեկավար,
2. Ռեժիսոր,
3. Սցենարիստ,
4. Օպերատոր,
5. Համակարգչային

գրաֆիկայի

մասնագետ:

Հայտատուն պետք է ունենա նաև օժանդակ, տեխնիկական աշխատակազմ, իսկ անհրաժեշտության դեպքում ներգրավի այլ մասնագետների՝ լուսանկարիչ, տեստիմոնիալ, շոունեն, փորձագետներ, այլն:

Հայտատուի հիմնական մասնագիտական աշխատակազմը ցանկալի է, որ պարբերաբար վերապատրաստված լինի:

Հայտատուն պետք է ունենա նշված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածություն /ստուդիա, նկարահանման տեխնիկա, մոնտաժման և գրաֆիկական աշխատանքներում կիրառվող թվային տեխնիկա և տրանսպորտային միջոցներ/:

Շահագրգիռ ընկերությունները պետք է տրամադրեն նշված ծառայություններն իրականացնելու համար համապատասխան որակավորում, ֆինանսական և տեխնիկական կարողություններ, աշխատակազմ ունենալու վերաբերյալ բավարար տեղեկատվություններ /ծանուցագրքեր, կատարված նմանատիպ աշխատանքների բնութագրություն, նշված բնագավառի փորձի և համապատասխան որակավորում ունեցող աշխատակազմի վերաբերյալ տեղեկություններ, կենսագրական տվյալներ,

վկայականներ և արտոնագրեր, անձնակազմի վերապատրաստման մասին հավաստող տեղեկանքներ, ֆինանսական տվյալներ և այլն/:

Ծառայությունների սկիզբը նախատեսված է 2018թ. մայիսի 1-ից՝ մեկ տարի ժամկետով՝ հետագայում շարունակելու հնարավորությամբ: Լավագույն փորձառություն ունեցող ընկերությունները կիրավիրվեն ներկայացնելու ֆինանսական առաջարկ:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ «Վեոլիա Ջուր» ընկերությունից աշխատանքային օրերին ժ. 09:00–17:00-ն: Հետաքրքրության արտահայտման հայտը պետք է ներկայացվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ներքոհիշյալ հասցեով կամ էլ. փոստով՝ մինչև 2018 թվականի ապրիլի 20-ը ժամը 15.00-ն:

Վեոլիա Ջուր ՓԲԸ

ՀՀ, 0025, Երևան, Ադոնց 6/1

Հեռախոս՝ (374 11) 54-26-95, 077 24-42-22

Էլեկտրոնային փոստ՝ aytsemnik.martirosyan@veolia.com